

Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի <<Սառնաղբյուրի Մաթևոս Մաղաթյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը հայտարարում է ուսուցչի թափուր տեղի մրցույթ «Ինֆորմատիկա» /6ժամ / և «Հասարակագիտություն» /14 ժամ/:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար (3 x 4) չափի
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. ինքնակենսագրություն (Ձև 5)
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև Փետրվարի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 29.02.2024թ. ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի Մաթևոս Մաղաթյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ գ. Սառնաղբյուր փողոց 5 շենք 6

Տեղեկությունների համար զանգահարել 098-744-775 հեռախոսահամարով:

ՀՀ Շիրակի մարզի <<Սառնաղբյուրի Մաթևոս Մաղաթյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Ն. Այվազյան